Ավետիք Իսահակյան

Լա՛ց, իմ նազելիս, լա՛ց դա՛ռն ու անհո՛ւն

Լա՛ց, իմ նազելիս, լա՛ց դա՛ռն ու անհո՛ւն,
Աշխարհի վերքին չըկա դեղ - դարման.
Ի՞նչ է մեր կյանքը – բոց մի փայլփլուն՝
Հողմերի առջև ահեղ բնության:

Ե՛վ սեր ու երգեր, և՛ փառք ու հանճար
Սին պատրանքներ են մահը մոռնալու,
Եվ մարդը՝ դժբախտ, անզոր ու անճար՝
Ծնված է մահին պատառ դառնալու:

Հավիտենական, անծիր, անսահման
Խավարների մեջ, կյա՛նք, դու ես մի լույս,
Որ մի պահ շողաս, մարիս հավիտյան, -
Լա՛ց, իմ նազելիս, լա՛ց դա՛ռն ու անհո՛ւյս:

Իմ սիրտը նման բացված խոր վերքի,
Որ տիեզերական կսկիծն է լալիս.
Լալիս է դարեր առանց արցունքի, -
Ա՜խ, հեգ գլուխդ դի՛ր վշտոտ կրծքիս:

Դի՛ր անհույս սրտիս գլուխդ ու լաց,
Ամենքի բախտը լա՛ց, իմ նազելի՛ս.
Լա՛ց, - և արցունքդ դեռ չըցամաքած՝
Դուռդ կըբախե մահը, նազելի՛ս …

1908

Թիֆլիս

Յատուկ Պոեմ